խանան և բարոյապէս կը տիրեն բնակած աշխարհաց վրայ։

Ես այնպէս կարծեմ որ հայ զեղացին աշխատասիրութեան և մտաց զարգացման մասին՝ ոչ Գերմանացւոյն և ոչ Ռուսին դիմաց կը խոնարհի. առաջնորդի պէտք ունի նա, մերձաւոր օրինակը և խրախուսիչ յորդորը շուտով կերպարանափոխ կարնան առնել Նախիջևանցի հայ տխրատեսիլ գեղեը։ Եթէ ոչ այժմեան գեղացիք, այլ անշուշտ՝ իմ գեղերուն ուսումնարանաց մէջ տեսած փոքրիկ և կայտառ հայ մանկութիւնն՝ օր մի մեծնալով՝ պիտի իրագործեն իմ փափաքը. իրենց բարօրութեան համար։

ԺԲ

ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԴԱՐՁ Ի ԿԱՖԱ

«Համբարձման երկուշաբթին, առէք զփոցդ և զգերընդին», զուրցելով շիրակացի առածը 'ի դաշտ կը հրաւիրէ զհայ մշակը՝ ատոքացեալ ցորենը հնձելու համար. այլ Եկատերինեսլաւ գաւառի հայ մշակին համար դեռ շատ կանուխ էր այդ հրաւէրը, մանաւանդ այս տարի (1884), զի Մայիսի 17 տօն էր Համբարձման և դեռ ցորեանք չէին հասկ կապել։ Մեք թողլով գիւղերը 'ի քաղաք դառնանք ներկայ գտնուելու տօնական հանդիսից։ Նախիջևանու եկեղեցեաց մէջ, ըստ վաղեմի հայկական սովորութեանց, եկեղեցական պաշտամունք կանուխ կը լինին. ուստի առաւօտեան ժամը 8 ին